

Ա. ՃԱՇ ԵՒ ԸՆԹՐԻՔ

1. — Բաժանումն: — Յերեկի երբեակ բաժանմանց թուով, որ են առաւօտ՝ միջօրէ եւ երեկոյ, արեւմտեայց մէջ նոյն պահերու հետ կապուած էին երեք կերակուր՝ զանազան կոչումներով (Գար. Ա, 1272): Մեր քով վերջին երկուքը ծանօթ, իսկ առաւօտու ճաշիկն անյիշատակ կը մնայ. որովհետեւ շատ աննշան էր այդ հապճեպ եւ անկանոն սնունդը, եւ զուրկ որ եւ է հանդիսաւորութենէ: Այս պատճառաւ պատմութիւնը որ եւ իցէ կարելորդէպք չէ կապած անոր հետ, որով զայն յիշելու առիթ ունենար: Մեր իրաւունք ունինք նոյն իսկ կասկածելու նախաճաշի գոյութեան վրայ մեր մէջ, երբ նկատենք որ Հրէից եւ ուրիշ արեւելեայց ալ սովորական չէր արդէն առաւօտուն ճաշ ուտել (Վիգ. Ե, 1046): Տեսնենք ուրեմն միւս կերակրները:

2. — Ճաշ: — Ա. Սա ծագած է պրս. ձեշնէն (Գ. Դպ.), եւ արմատն է մեր ձաշեկ կամ ձաշակեկ բայից, որոնք կը նշանակեն ուտել, եւ երկրորդը՝ նաեւ ըմ-